ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԺՆԵՎՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԵՑ ԵՀԽ-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Սույն թվականի օգոստոսի 26-ից սեպտեմբերի 3-ը ժնևում գումարվեց եկեղեցիների Համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի տարեկան համաժողովը, որի բացումը տեղի ունեցավ եկեղեցական հատուկ արարողությամբ: Համաժողովին Մայր Աթոռ Ս. Էջմիածինը մասնակցում էր երկու ներկայացուցիչներով՝ հանձինս Գերաշնորհ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանի և օրիորդ Սիլվա Ղազելյանի:

Ընթացիկ հարցերի քննարկումից և պատգամավորների հաշվառումից հետո, անդրանիկ նիստում լսվեցին և գնահատվեցին ԵՀԽ-ի ատենապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի, ինչպես նաև ընդհանուր քարտուղար դոկտոր Կոնրադ Ռայզերի տեղեկագրերը:

Երեկոյան Ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչները գումարեցին առանձին ժողով, որի ընթացքում քննարկվեցին ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր, այդ թվում նաև՝ հատուկ հանձնախմբի կազմության հարցը: Որոշվեց, որ Ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչների համանման հանդիպում կգումարվի ևս մեկ անգամ՝ շաբաթ օրը:

Կազմվեցին խմբեր և ենթախմբեր: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներկայացուցիչներից Տ. Աղան արքեպս. Պալիոզյանն ընդգրկվեց ծրագրային հանձնախմբում, օր. Սիլվա Ղազելյանը՝ թիվ 2 ուղեցույց հանձնախմբում:

ԵՀԽ կենտրոնական վարչությունն օգոստոսի 31-ից սեպտեմբերի 1-ը շարունակեց իր աշխատանքները առանձին հանձնախմբերում:

Օգոստոսի 31-ի երեկոյան նորակազմ «Հատուկ հանձնախմբի» ուղղափառ և ոչ ուղղափառ անդամները գումարեցին իրենց անդրանիկ նիստը, որի ընթացքում տեղի ունեցավ կարծիքների փոխանակում, միաժամանակ որոշվեց հանձնախմբի հաջորդ ժողովը գումարել սույն թվականի դեկտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում: Այս նիստում Հայաստանյայց Եկեղեցին ներկայացրեց Տ. Աղան արքեպս. Պալիոզյանը: Որոշվեց, որ առաջիկա ժողովին յուրաքանչյուր ներկայացուցիչ իր ելույթում պարտադիր համադրի իր հարազատ եկեղեցին Ուղղափառ երկու եկեղեցիների հետ:

Սեպտեմբերի 1-ին Տիեզերական Պատրիարքության ժնևի առաջնորդ Դամասկինոս Արբազանի կողմից տրվեց պաշտոնական ընդունելություն՝ ի պատիվ ԵՀԽ-ի կենտրոնական վարչության Ուղղափառ եկեղեցիների եկեղեցական և աշխարհական մասնակից անդամների:

Սեպտեմբերի 3-ին տեղի ունեցավ ԵՀԽ-ի կենտրոնական կոմիտեի հերթական ժողովի պաշտոնական փակումը: Եկեղեցական հատուկ արարողության մաս կազմեցին նաև ոսկեղենիկ հայերենով հնչած աղոթքը և հոգևոր երգը:

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ